ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 09

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2023թ. ապրիլի 17-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրայելյան	Կոմիտեի անդամ

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **10.04.2023թ-ի «Լեռնային Արցախ»-«Արարատ-Արմենիա» (ՊԼ, 128) խաղի 1) ակումբի հանդերձարանի դռան ապակու կոտրված լինելը, 2) լուսատախտակի խափանումներով աշխատելը, 3) երկու էլեկտրոնային ցուցատախտակի փոխարեն մեկ էլեկտրոնային ցուցատախտակ լինելը, 4) հաղորդավարի բացակայությունը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Լեռնային Արցախ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

2) Հաստատված համարել «Լեռնային Արցախ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
3) Հաստատված համարել «Լեռնային Արցախ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 75-րդ կետը՝ «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
4) Հաստատված համարել «Լեռնային Արցախ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

2. 09.04.2023թ-ի «Ալաշկերտ»-«Վան» (ՊԼ 129) խաղին մարզադաշտի ոչ բարեկարգ լինելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ալաշկերտ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Ալաշկերտ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

3. 11.04.2023թ-ի «Նոա»-«Շիրակ» (ՊԼ 127) խաղին 1) դաշտի տեր թիմի երկրպագուների կողմից ճայթրուկների օգտագործումը 2) շտապ օգնության մեքենայի խաղի ավարտից շուտ մեկնեելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Նոա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Նոա ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի՝ 25,000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Նոա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Նոա ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

4. 11.04.2023թ-ի «Ուրարտու»-«Փյունիկ» (ՊԼ 130) 1) խաղաժամանակահատվածում մի քանի տասնյակ երեխաների մարզադաշտ ներխուժելը, 2) դաշտի տեր թիմի երկրպագուների կողմից խաղաժամանակահատվածում ձայնային ռումբերի և ֆայերների արձակում, 81-րդ րոպեին 1 ձայնային ռումբի արձակում և խաղադաշտ նետում, 3) երկու էլեկտրոնային ցուցատախտակի փոխարեն մեկ էլեկտրոնային և մեկ մեխանիկական ցուցատախտակ տրամադրելը, 4) խաղավարտից հետո դաշտի տեր թիմի աշխատակից Սամվել Արուստամյանի մրցավարական հանդերձարան մտնելը և մրցավարի որոշման

նկատմամբ անհամաձայնություն հայտնելը, 5) հյուր թիմի երկրպագուների կողմից խաղավարտից հետո ֆայերների և ծուխերի արձակում

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Ուրարտու» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 39-րդ կետը՝ «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Ուրարտու» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի 150,000 ՀՀ դրամի չափով:
3) Հաստատված համարել «Ուրարտու» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 75-րդ կետը՝ «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
4) Հաստատված համարել «Ուրարտու» թիմի աշխատակցի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 38-րդ կետը՝ «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:
5) Հաստատված համարել «Փյունիկ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամի չափով:

   Հաստատված համարել «Ուրարտու» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի 20,000 ՀՀ դրամի չափով:

5. 10.04.2023թ-ի «ԲԿՄԱ 2»-«Ուրարտու 2» (ԱԽ 141) խաղին գնդակ վերադեդարձնող երեխաների մարզիչի անբավարար կերպով պատրաստվելը, 10 երեխայի փոխարեն 6 երեխայի հանդիպումը սպասարկելը, մարզիչի՝ հանդիպման ընթացքում բացակայելը և միայն եզրափակիչ սուլիչից հետո հայտնվելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «ԲԿՄԱ 2» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «ԲԿՄԱ» թիմի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

6. **13.04.2023թ-ի «Գյումրի ՄՊՀՄԴ-10» «Բենտոնիտ-10» (13Մ2-055) խաղի չկայանալը անբարենպաստ եղանակի պատճառով**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հիմք ընդունելով Կանոնակարգի 4-րդ հոդվածի 5-րդ կետը՝ թույլատրել վերնշանակել «Գյումրի ՄՊՀՄԴ-10» «Բենտոնիտ-10» (13Մ2-055) հանդիպումը:

7. **13.04.2023թ-ի «Շիրակ-1-10» «Բենտոնիտ Այգեհովիտ-10» (13Մ2-056) խաղին «Բենտոնիտ Այգեհովիտ-10» թիմի չներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Բենտոնիտ Այգեհովիտ-10» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Բենտոնիտ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով և թիմին գրանցել տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով:

8. **13.04.2023թ-ի «Դովեղ-10»-«Շիրակ-11» (13Մ2-054) խաղին 1) «Դովեղ-10» թիմի հայտացուցակում գրանցված Արեն Ազատյանի փոխարեն այլ անձի ներկայանալը, 2) հայտացուցակում գտնվող ֆուտբոլիստների քարտեր և անձը հաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով խաղն ուշացումով սկսելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Դովեղ-10» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 45-րդ կետը՝ «Դովեղ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Դովեղ-10» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 35-րդ կետը՝ «Դովեղ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով:

9. **11.04.2023թ-ի «Վեստ Արմենիա-2-11»- «Վեստ Արմենիա-1-11» (12Մ7-024) խաղի չկայանալը երկու թիմերի մարզիչների բացակայության պատճառով**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Վեստ Արմենիա-2-11» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 45-րդ կետը՝ «Վեստ Արմենիա ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

Հաստատված համարել «Վեստ Արմենիա-1-11» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 45-րդ կետը՝ «Վեստ Արմենիա ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

10. 12.04.2023թ-ի «Կոշ-13» - «Արագածավան-13» (10Մ5-004) խաղին «Արագածավան-13» թիմի չներկայանալը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արագածավան-13» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, և և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 45-րդ կետը՝ «Արագածավանի գ/պ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»: